

Ինչպես ստեղծել ձեռքի գծապատկեր և նամակ
Քայլ 1 Ներածություն
<ul style="list-style-type: none"> - Կարդացե՛ք «Պայմաններ և դրույթներ» (“Terms & Conditions”) և «Գաղտնիության քաղաքականություն» (“Privacy Policy”) կետերը (միայն անգլերեն տարբերակով), որից հետո նախ սեղմե՛ք «Ընդունել» (“Accept”), իսկ այնուհետև «Հաջորդը» (“Next”) հրամանները:
<ul style="list-style-type: none"> - Ուշադրություն: Եթե դուք 18 տարեկանից փոքր եք, ապա «Պայմաններ և դրույթներ» (“Terms & Conditions”) և «Գաղտնիության քաղաքականություն» (“Privacy Policy”) կետերը պետք է ընթերցեք ծնողի կամ խնամակալի ներկայությամբ, որից հետո միայն սեղմեք «Ընդունել» (“Accept”) հրամանը:
Քայլ 2 Տեղեկություններ մասնակցի վերաբերյալ
<ul style="list-style-type: none"> - 1) Ընտրե՛ք Ձեր երկիրը կամ վարչական շրջանը - 2) Գրե՛ք Ձեր անունը (ազգանունը լրացնել չի պահանջվում) - 4) Լրացրե՛ք էլեկտրոնային հասցեն (մասնակցության հավաստագիրն ուղարկելու նպատակով), այնուհետև հաստատման համար կրկնե՛ք այն: - 5ա) Ընտրե՛ք տարիքային խումբը. եթե դուք 18 և ավելի տարեկան եք, ընտրե՛ք «18 և բարձր» կետը, այնուհետև սեղմե՛ք «Հաջորդը» (“Next”) հրամանը: - 5բ) Ընտրե՛ք տարիքային խումբը. եթե դուք 18 տարեկանից փոքր եք, ընտրե՛ք «18-ից ցածր» կետը, ապա ներմուծե՛ք ծնողի կամ խնամակալի անունը, որից հետո միայն կարող եք սեղմել «Ընդունել» (“Accept”), իսկ այնուհետև «Հաջորդը» (“Next”) հրամանները:
Քայլ 3 Ձեռքի գծապատկերի ստեղծում
<ul style="list-style-type: none"> - Օգտագործե՛ք Ձեր երևակայությունը Ձեր նախընտրած ոճի և գույնի ձեռքի գծապատկեր ստանալու համար: Գծապատկերի եզրերից դուրս ներկված գույները չեն ցուցադրվի: - Ավարտելուց հետո սեղմե՛ք «Հաջորդը» (“Next”) հրամանը:
Քայլ 4 Հույսի նամակ
<ul style="list-style-type: none"> - Ինդրում ենք ստորև առկա դաշտում տեղադրել Ձեր «Հույսի նամակը», որպեսզի ցույց տաք Ձեր քաջությունը, խիզախությունը և դիմացկունությունը: - Նամակը կարող եք գրել Ձեր մայրենի լեզվով: - Ավարտելուց հետո սեղմե՛ք «Նախադիտում» (“Preview”) հրամանը:
Քայլ 5 Հաստատում
<ul style="list-style-type: none"> - Այժմ դուք կարող եք տեսնել, թե ինչպիսի տեսք ունի Ձեր մասնակցության հավաստագիրը: - Եթե դուք հավանում եք այն, սեղմե՛ք «Հաստատել» (“Confirm”) հրամանը: - Եթե դուք ցանկանում եք փոփոխություններ կատարել սեղմեք «Նախորդը» (“Back”) հրամանը: • Ծնորհակալություն մանկական քաղցկեղի միջազգային օրվան նվիրված #ThroughTheirHands նախաձեռնությանն աջակցելու համար: • Ձեր հաղորդագրությունն ուղարկվել է ստուգման: Յոթ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցության հավաստագիրը կուղարկվի Ձեր գրանցած էլեկտրոնային հասցեին:
Վերջ